

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

24.01.2003թ.

ժ. 10.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Ջ. Սիրգոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Ն. Մուշեղյան (*Անվտուխ վիճակագրության, հրատարակումների և մարկետինգի բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Թ. Առաքելովա (*Մարդահամարի վարչություն*), Ջ. Մազլուչանց (*Տնային տնտեսությունների հետազոտության բաժնի պետ*), Գ. Մարտիրոսովա (*Տնային տնտեսությունների հետազոտության բաժնի գլխավոր մասնագետ*), Ա. Շաբոյան (*Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ*), Ջ. Ավոյան (*Ձրադրվածության և աշխատանքի վարձատրության վիճակագրության բաժնի մասնագետ*), Ռ. Ասլանյան (*Բիզնես ռեգիստրի բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում` երեք հարց.

1. «2003թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» հաստատելու մասին»

/Չեկուցող` Ն. Մուշեղյան/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 21-25-ը Կիևում կայացած «Մարդահամարի աղյուսակների ստացումը» թեմայով սեմինարի վերաբերյալ.

/Ներկայացնող` Գ. Գևորգյան, Թ. Առաքելովա/

2.2 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 28-31-ը Շվեդիայի վիճակագրական ծառայություն կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող` Յու. Պողոսյան, Ջ. Մազլուչանց, Գ. Մարտիրոսովա, Հ. Եղիազարյան/

2.3 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 24-25-ը Աթենքում կայացած «Տվյալների Տարածման Հատուկ Ստանդարտ» խորագրով գիտաժողովին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող` Վ. Դանիելյան/

2.4 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 28-29-ը Ազգային հաշիվների գծով Հունգարիայի կենտրոնական վիճակագրական բյուրո (ք. Բուդապեշտ) կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող` Վ. Դանիելյան, Ջ. Սիրգոյան, Ա. Շաբոյան/

2.5 Հաշվետվություն 2002թ. նոյեմբերի 4-6-ը Հելսինկիում «Աշխատուժի ընտրանքային հետազոտություններ» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ.

/Ներկայացնող` Գ. Գևորգյան, Ջ. Ավոյան/

2.6 Հաշվետվություն 2002թ. նոյեմբերի 6-8-ը Վարշավա քաղաքում կայացած «Բիզնես ռեգիստր» թեմայով աշխատանքային հանդիպման վերաբերյալ.

/Ներկայացնող` Ռ. Ասլանյան, Գ. Մանուկյան/

2.7 Հաշվետվություն 2002թ. նոյեմբերի 11-15-ը Իտալիա կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող` Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

2.8 Հաշվետվություն ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի (UNDP) կողմից 2002 թվականի դեկտեմբերի 1-6-ը Վիեննայում կազմակերպված ուսումնական հանդիպման մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Պետրոսյան/

2.9 Հաշվետվություն 2002թ. դեկտեմբերի 11-13-ը Ալմաթի քաղաքում կայացած «Աղքատության նվազեցման ռազմավարություն» թմայով ԱՊՀ-ի 7 երկրների 3-րդ ֆորումին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսով/

2.10 Հաշվետվություն 2002թ. դեկտեմբերի 14-ից մինչև 25-ը Թեհրանում կայացած «Միջանկյալ ընտրանքի կազմակերպումն ու կիրառումը» Թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Սկրտչյան/

3. Այլ Հարցեր

3.1 ՀՀ արդարադատության նախարարություն պետական գրանցման ներկայացված ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 12.08.2002 թ. թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բովերկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «2003թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» հաստատելու մասին»

/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/

Նշվեց, որ Ծրագրի նախագծի մշակման աշխատանքներն իրականացնելիս հաշվի են առնվել վիճակագրական աշխատանքների իրականացման համար բյուջետային ֆինանսավորման ապահովածությունը, «2001-2003 թվականների պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև ապահովվել է 2001 և 2002 թվականների պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերի կառուցվածքային և օրգանական շարունակականությունը: Վերոնշյալով պայմանավորված, մյուս երկու Ծրագրերի համեմատությամբ, կատարվել են առանձին մասնակի փոփոխություններ, որոնք ներկայացվեցին զեկուցողի կողմից անհրաժշտ հիմնավորմամբ և ընդունվեցին մասնակիցների կողմից:

Որոշեցին՝

Հաստատել «2003թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը»:

/Բովերկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 21-25-ը Կիևում կայացած «Մարդասահմարի աղյուսակների ստացումը» թեմայով սեմինարի վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան, Թ. Առաքելովա/

2.2 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 28-31-ը Շվեդիայի վիճակագրական ծառայություն կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Յու. Պողոսյան, Ջ. Մազուչանց, Գ. Մարտիրոսովա, Հ. Եղիազարյան/

2.3 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 24-25-ը Աթենքում կայացած «Տվյալների Տարածման Հատուկ Ստանդարտ» խորագրով գիտաժողովին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Վ. Դանիելյան/

2.4 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 28-29-ը Ազգային հաշիվների գծով Հունգարիայի կենտրոնական վիճակագրական բյուրո (ք. Բուդապեշտ) կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Վ. Դանիելյան, Ջ. Միրզոյան, Ա. Շաբոյան/

2.5 Հաշվետվություն 2002թ. նոյեմբերի 4-6-ը Հելսինկիում «Աշխատուժի ընտրանքային հետազոտություններ» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան, Ջ. Ավոյան/

2.6 Հաշվետվություն 2002թ. նոյեմբերի 6-8-ը Վարշավա քաղաքում կայացած «Բիզնես ռեզիստր» թեմայով աշխատանքային հանդիպման վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ռ. Ասլանյան, Գ. Մանուկյան/

2.7 Հաշվետվություն 2002թ. նոյեմբերի 11-15-ը Իտալիա կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

2.8 Հաշվետվություն ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի (UNDP) կողմից 2002 թվականի դեկտեմբերի 1-6-ը Վիեննայում կազմակերպված ուսումնական հանդիպման մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Պետրոսյան/

2.9 Հաշվետվություն 2002թ. դեկտեմբերի 11-13-ը Ալմաթի քաղաքում կայացած «Աղքատության նվազեցման ռազմավարություն» թմայով ԱՊՀ-ի 7 երկրների 3-րդ ֆորումին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսովա/

2.10 Հաշվետվություն 2002թ. դեկտեմբերի 14-ից մինչև 25-ը Թեհրանում կայացած «Միջանկյալ ընտրանքի կազմակերպումն ու կիրառումը» Թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Սկրտչյան/

Որոշեցին՝

Հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/արձանագրային/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Այլ հարցեր

3.1 ՀՀ արդարադատության նախարարություն պետական գրանցման ներկայացված ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 12.08.2002 թ. թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/

Նշվեց, որ «Ամփոփ հաշվետվություն հարկային տեսչությունում հետաքննությունների գործերի մասին» Ձև թիվ 1-հետաքննությունն պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը» ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 12.08.2002թ. թիվ 166-Ն որոշմամբ հաստատվելուց հետո սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն պետական գրանցման: 2003 թ. հունվար ամսին ՀՀ արդարադատության նախարարությունը (վարչության պետ Խտրյան) առաջարկել է

վերոնշյալ որոշման մեջ «հարկային տեսչությունում» բառերը փոխարինել «հարկային պետական ծառայությունում» բառերով` հաշվի առնելով ՀՀ պետական եկամուտների նախարարության վերակազմակերպումը ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության` համաձայն ՀՀ Նախագահի հրամանագրի: Միայն վերոնշյալ փոփոխությունը կատարելուց հետո վերոնշյալ որոշումը կգրանցվի ՀՀ արդարադատության նախարարությունում:

Նշվեց, որ հիմնավորելով այն իրողությունը, որ 2002 թ. օգոստոսի 12-ի թվակիր որոշման մեջ չի կարող արտացոլվել ՀՀ պետական եկամուտների նախարարության վերակազմակերպման գործընթացի արդյունքը, իսկ նոր որոշման ընդունումը առաջ կբերի ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002թ. ընթացքում ընդունած որոշումների համարակալման շարունակականության խախտում, առաջարկվել է 12.08.2002թ. թիվ 166-Ն որոշումը գրանցել նույնությամբ, այնուհետև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նոր որոշմամբ կատարել առաջարկվող փոփոխությունը, ինչը սակայն մերժվել է:

Չեկուցողի կողմից առաջարկվեց ընդունել ՀՀ արդարադատության նախարարության առաջարկությունը:

Որոշեցին`

հիմք ընդունելով ներկայացված հաղորդումը`

1. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 12.08.2002թ. թիվ 166-Ն որոշման մեջ կատարել, ՀՀ արդարադատության նախարարության կողմից առաջարկված և պնդված, հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- որոշման անվանման մեջ և տեքստում «Հարկային» բառից առաջ հանել «Ամփոփ հաշվետվություն» բառերը,

- որոշման անվանման մեջ և տեքստում «Հարկային» բառից հետո «տեսչությունում» բառը փոխարինել «պետական ծառայությունում» բառերով,

- որոշման անվանման մեջ և տեքստում «հետաքննություն» բառից հետո լրացնել «(եռամսյակային) ամփոփ » բառերը:

2. առանց ամսաթվի և համարակալման նիշի փոփոխության ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 12.08.2002թ. թիվ 166-Ն, վերոնշյալ փոփոխություններով և լրացումներով խմբագրված, որոշումը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն պետական գրանցման:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան